ԱՐԾԱԿ ԲԱԼՅԱՆ

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Նշանավոր քաղաքական պետական հասարակական գործիչ Սիմոն Վրացյանի խմբագրական-լրագրողական աշխատանքը եղել է նրա բազմաբնույթ գործունեության անբաժանելի օղակը եւ կարող է պատիվ բերել յուրաքանչյուր մասնագետ լրագրողի, խմբագրի:

Ս. Վրացյանի կյանքի առաջին շրջանից սկսած նրա գործունեության բոլոր դրսեւորումներին զուգահեռ ընթացել է լրագրողական, խմբագրական աշխատանքը: Հիմնավոր հայագիտական կրթությունը, ուսումնառությունը ժամանակի Պետերբուրգի առաջադեմ կրթական կենտրոններում, բնածին մտավոր կարողությունը՝ երեւույթների մեջ խորամուխ լինելու, հետաքրքրությունը անցյալ եւ ժամանակակից քաղաքական, հասարակական երեւույթների հանդեպ, հատկապես ազգային խնդիրներին առնչվող, հետզհետե կուտակվող կենսափորձը մեծապես նպաստել են նրա լրագրողական, խմբագրական հմտությունների, ունակությունների դրսեւորմանը:

1900 թ. Ս. Վրացյանը ընդունվում է Գեւորգյան ճեմարան: Շուտով նա ,գործի է անցնումն. հիմնադրում է դասարանական ,Աշակերտական սիրտե անունով ձեռագիր թերթ: «Գրական-գեղարվեստական, պատմական-բանասիրական-հասարակական, տնտեսական եւ չեմ հիշում ուրիշ ինչական պարբերական էր», - հումորով վերհիշում է Ս. Վրացյանը[1]: «Հրատարակութեան այսպէս ասած՝ տեխնիական մասը ես էի վարում, հիմնադիր եւ պատասխանատու խմբագիր»[2]:

Նույն ժամանակաշրջանում նա համախմբագրում է, «Ոտանավորատուփ» անվամբ երկրորդ ձեռագիր պարբերականը: Վերջինիս մասին Ս. Վրացյանը գրում է, թե թերթը մտքերով աղքատ էր, հանգերով հարուստ[3]: Այս կարճ ժամանակահատվածը, որը ճեմարանի աշակերտն անցկացրել է ամռանը Բյուրականում, նշանակալից եղավ նրա համար. «Իմ հայացումը այլեւս լրիւ էր վերջնական եւ անդարձ»[4]: Ճեմարանում սովորելու տարիներին նա թղթակցել է «Մշակին», Տ. Նազարյանի «Աղբյուրին», «Տարազին»[5]:

1907 թ. Ս. Վրացյանն ավարտում է Գեւորգյան ճեմարանը, վերադառնում հայրենի քաղաք՝ Նոր-Նախիջեւան: Այստեղ նա գործուն մասնակցություն է ունենում տեղում հրատարակվող «Նոր կյանք» թերթի աշխատանքներին, խմբագրում է այն,

---

1 **Ս. Վրացեան,** Կեանքի ուղիներով. Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. Ա, Պէյրութ, 1967, թ.82:

2 Անդ:

3 Տե՛ս անդ:

4 Անդ:

5 Տե՛ս «Սիմոն Վրացեանի ինքնակենսագրութիւնը». «Դրօշակ», 2008, թ. 12, էջ 41:

որոշակի գաղափարական ուղղվածություն հաղորդում: Նոր-Նախիջեւանից Ս. Վրացյանը թղթակցում է «Մշակին», տեղի հայությանը հուզող հարցերին վերաբերող նյութերով: Այսպես, 1907թ. փետրվարի 8-ին նա ընդարձակ հոդված է ուղարկում «Մշակին»՝ քաղաքի արհեստավորական դպրոցի կրթական կնճռոտ խնդիրների վերաբերյալ «Վուլկան» ստորագրությամբ[6]: «Նոր կյանքում» նա հանդես էր գալիս Սիգ, Մար-Շիմոն, Մամուրյան, Մորգան եւ այլ կեղծանուններով[7]:

Ս. Վրացյանը ճեմարանն ավարտելուց հետո երազում էր կրթությունը շարունակել, սակայն դա նրան հաջողվում է միայն 1908 թ.: Պետերբուրգում նրա ուսումնառությունը տեւում է երկու տարի. սովորում է բարձրագույն մանկավարժական դասընթացներում, նույնքան՝ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Հնարավորություն է ունենում մոտիկից ծանոթանալու, լսելու ժամանակի առաջադեմ գործիչների, մանկավարժների դասախոսությունները, դիտելու ներկայացումներ, մի խոսքով հաղորդակցվելու մայրաքաղաքի հասարական ու մշակութային, կրթական կյանքի կարեւոր իրադարձություններին: «Պետերբուրգը լրացրեց Էջմիածնի ճեմարանի թերիները, - գրում է հետագայում Ս.Վրացյանը[8]: Ուսանելուն զուգահեռ նա թղթակցում է Թիֆլիսի մամուլին «Ս. Վրացյան» ստորագրությամբ, ինչպես նաեւ Կ.Պոլսի «Ազատամարտին»[9]:

Դաշնակցության դեմ սկսված հալածանքները հարկադրեցին Ս. Վրացյանին թողնել Պետերբուրգը եւ ապաստանել Թուրքիայում: 1910 թ. նրան տեսնում ենք Կարինում, որտեղ դասավանդում է Սանասարյան վարժարանում՝ մանկավարժություն եւ Հռիփսիմյան օրիորդաց դպրոցում՝ Հայոց պատմություն:

Կարինում Ս. Վրացյանը 1910 - 1911 թթ. խմբագրում է «Յառաջ» թերթը: «Իմ գլխավոր զբաղումը Կարինում,-իհարկէ, «Յառաջի» խմբագրութիւնն էր» եւ ապա արտաքին բարեփոխումներից զատ, որ կատարում է խմբագիրը, գլխավորն իհարկե բովանդակությունն էր, ընդգրկման սահմաններն էին, խնդիրների բազմազանությունը, որ արծարծում էր «Հայրենիք» եւ դրանով իսկ ձեռք բերում հեղինակություն Կարինի հայոց շրջանակներում:

Դաշնակցության առաջադրանքով Ս. Վրացյանը մեկնում է Հյուսիսային Ամերիկա: Այնտեղ նա 1911 թ. դեկտեմբերից մինչեւ 1914 թ. մայիսը խմբագրում է «Հայրենիք» պարբերականը, որը նրա խմբագրությամբ դառնում է երկօրյա[10]:

«Հայրենիքը» մշտական կապի մեջ էր երկրի հետ, հատկապես սերտ կապեր ուներ Կարինի հայության հետ: Այդ են վկայում հրապարակի վրա առկա վավերագրերը[11]: Ս. Վրացյանը միաժամանակ մեկ տարի խմբագրել է Ֆրեզնոյի «Ասպարէզը», աշխատակցել է Կարինի «Յառաջին», «Ազատամարտին»[12]:

---

6 ՀԱԱ, ֆ.227, ց.1, գ.298, թթ. 1 - 8 (ինքնագիր):

7 Տե՛ս «Սիմոն Վրացեանի ինքնակենսագրութիւնը», էջ 41:

8 **Ս. Վրացեան,** Կեանքի ուղիներով, հ. Բ, Պէյրութ, 1960, էջ 127:

9 Տե՛ս անդ, էջ 118, «Սիմոն Վրացեանի ինքնակենսագրութիւնը»,էջ 41:

10 **Ս.Վրացեան,** Կեանքի ուղիներով, հ. Բ, էջ 163:

11 Տե՛ս **Ս. Վրացեան**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 17 - 65:

12 Տե՛ս «Սիմոն Վրացեանի ինքնակենսագրութիւնը», էջ 41:

1914 թ. Ս. Վրացյանը վերստին գալիս է Կարին: Սակայն թուրքական իշխանությունները նրան շուտով արտաքսում են իբրեւ ռուսահպատակի. սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը եւ Թուրքիան ու Ռուսաստանը ներգարվված էին իբրեւ հակառակորդ, թշնամի կողմեր:

Թիֆլիս հասնելով Ս. Վրացյանը անմիջապես մխրճվում է հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտը: Թղթակցում է տեղի հայկական կուսակցական ինչպես նաեւ ռուսալեզու մամուլին:

1917 թ. նա նշանակվում է «Հորիզոնի» խմբագիր:

Բնականաբար հայ հասարակության ուշադրությունը կենտրոնացած էր պատերազմական գործողությունների, կամավորական խմբերի գործունեության վրա: Ս. Վրացյանը, որ պատերազմի սկզբում դեմ էր կամավորական շարժմանը, հետագայում ոգեշնչող հոդվածներով խրախուսում էր կամավորական խմբերի երթը պատերազմի դաշտ:

1916 թ. մայիսին Ս. Վրացյանը մասնակցում է Պետրոգրադում կայացած հայ գաղթականներին նվիրված խորհրդակցությանը եւ՝ իբրեւ ներկայացուցիչ եւ՝ իբրեւ «Հորիզոնի» խմբագիր, պարբերաբար նյութեր տպագրում այդ անարդյունք ավարտված խորհրդակցության նիստերի մասին:

Ս. Վրացյանը «Հորիզոնի» էջերում նյութեր է հրատարակում 1917 թ. ամռանը Պետերբուրգում տեղի ունեցած միջպետական խորհրդակցության մասին, որում նա ներկայացնում էր Օզակոմը: «Հորիզոնը» բավականին մանրամասն լուսաբանում է արեւելահայերի համագումարի աշխատանքը (1917 թ. սեպտեմբեր - հոկտեմբեր): Ս. Վրացյանը համագումարին մասնակցում էր Դաշնակցության կողմից իբրեւ քաղաքական մոմենտի զեկուցող եւ «Հորիզոնի» խմբագիր[13]:

«Հորիզոնի» էջերում տագնապով էր արծածվում հետզհետե սուր կերպարանք ստացող հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը: Նյութեր էին տպագրվում թուրքերի զինված հարձակումների վերաբերյալ՝ հայ խաղաղ բնակչության, տուն վերադարձող գաղթականների, բանակի զինամթերքի պահեստների եւ այլ նման բռնությունների մասին: ,Որ հայերի կողմից էլ բռնություններ ու կամայականություններ տեղի էին ունենում, այդ իհարկե անհերքելի է»[14]: Ս. Վրացյանը իրավացիորեն դա բացատրում էր կոտորածներից փրկված հայ գաղթականների վրիժառությամբ: «Ինչ-որ մի մութ ձեռք պատերազմի ու խռովության սերմեր է փորձում ցանել հայ եւ թուրք ժողովուրդների մեջ... Երբ օդը հագեցած է գազերով, հարկավոր է ծայր աստիճան զգույշ լինել եւ կայծ չձգել այնտեղ, թե չէ պայթումը անխուսափելի կդառնա»[15]: «Հորիզոնի» խմբագիրն անշուշտ հասկանում էր, որ այդ «մութ ձեռքը» Թուրքիան է, որի էմիսարները 1916 - 1918 թթ. Անդրկովկասում վխտում էին, գրգռում թաթարներին Ռուսաստանի դեմ, հայերի դեմ:

1914-1920 թթ. Ս. Վրացյանը գործել է եւ՝ իբրեւ խմբագիր եւ՝ իբրեւ թղթակից

13 Տես «Համահայկական խորհրդակցություններ 1912-1920 թթ. », Երեւան, 2004, էջ 166:

14 **Ս. Վրացյան**, Հայաստանի հանրապետութիւն,Փարիզ, 1928, էջ 70:

15 «Հորիզոն», 1917, մայիսի 19:

«Հորիզոնին», թղթակցել հայալեզու ու ռուսալեզու պարբերական մամուլին («Հայրենիք»՝ Բոստոն, «Армянский вестник»՝ Մոսկվա, «Баку»՝ Բաքու, «Молот»՝ Թիֆլիս, «Донская речь»՝ Դոնի Ռոստով):

Հայաստանի հանրապետության անկախության հռչակումից հետո Ս. Վրացյանի լրագրողական խմբագրական գործունեությունը դառնում է ավելի ընդգրկուն եւ նպատակաուղղված. ամեն կերպ նպաստել պետականության ամրապնդմանը, ժողովրդի ֆիզիկական գոյության պաշտպանությանը: 1918 - 1919 թթ. նա Երեւանում խմբագրել է ,Զանգե պաշտոնաթերթը: Նույն ժամանակահատվածում, որոշ ընդհատումներով խմբագրել է «Հայաստանի կոօպերացիա» երկշաբաթաթերթը: Երկրի քայքայված տնտեսությունը ոտքի կանգնեցնելու համար հայ գործիչները կարեւորում էին կոոպերացիայի դերը եւ փորձում էին կիրառել տնտեսական զարգացման այդ եղանակը:

1918 թ. դեկտեմբերի 18-ին Հայաստանի Խորհրդարանը Ս. Վրացյանի նախաձեռնությամբ օրենք է ընդունում հեռագրական գործակալություն ստեղծելու մասին: «Նշենք, որ գործակալության խանձարուրի մոտ հենց սկզբից կանգնած է եղել լրագրողական հարուստ փորձով օժտված, մի քանի թերթերում աշխատած ու հրատարակված, ՀՅԴ- կուսակցության նշանավոր գործիչ Սիմոն Վրացյանը, որը վայելել է Հայաստանի խորհրդի մեծ վստահությունը»[16]: Գործակալությունը իր գործառույթը պատվով իրականացնում է մինչեւ օրս:

1919 թ. սեպտեմբերի 20-ից Ս. Վրացյանը Վ. Նավասարդյանի եւ Ա. Չիլինգարյանի հետ խմբագրում է «Յառաջ» ՀՅԴ- պաշտոնաթերթը, որը հրատարակվել է մինչեւ առաջին Հանրապետության գոյության դադարեցումը: Իբրեւ պաշտոնաթերթ «Յառաջը» ամենայն պատասխանատվությամբ էր կատարում իր դերը: Հանրապետության կյանքում տեղի ունեցող բոլոր նշանակալից իրադարձությունները՝ պարլամենտի ու կառավարության նիստերի վերաբերյալ՝ հաղորդագրություններից սկսած, կուսակցական գործիչների ելույթներով, արտաքին հարաբերությունների, ռազմական գործողությունների, բուսաբանական այգու, ձկնարդյունաբերության մասին նյութերով վերջացրած: Եւ բոլոր նյութերը ծառայում էին մեկ նպատակի՝ ամրապնդել Հայաստանի պետականությունը:

1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Յառաջի» խմբագրությունն առաձնապես կարեւորում է թուրքական ագրեսիային, հայրենիքի պաշտպանությանը նվիրված նյութերը: Այսօր էլ իր հրատապությունն ու նշանակությունը չի կորցրել Երեւանում հաստատված ու գործող վեց քաղաքական կուսակցությունների համատեղ ուղերձը միացյալ ուժերով թուրք զավթիչների դեմ պայքարելու հաստատակամության մասին: «Արտաքին թշնամին թող իմանա, հայ ժողովուրդ, որ Անկախության եւ Հայրենիքի նվաճման խնդրում տարաձայնություն չկա հայ քաղաքական կուսակցությունների միջեւ», - հայտարարում են դիմումի հեղինակները[17]:

Հայաստանի Հանրապետության անկումից հետո Ս. Վրացյանի լրագրողա-

16 **Նորա Մելիքյան, Հրայր Զորյան,** Արմեն Պրես - 90, (1918 – 2008), Երեւան, 2008, էջ 28:
17 «Յառաջ», 1920, հոկտեմբերի 7:

կան խմբագրական գործունեությունն ընթանում է արտասահմանում: Սակայն նրա գաղափարախոսությունը չի փոխվում. ելակետը մնում է անփոփոխ՝ Հայաստան եւ հայ ժողովուրդ:

1922 թ. Ս. Վրացյանը հաստատվում է Փարիզում: Մի կարճ ժամանակամիջոց Ա.Ահարոնյանի հետ նա հիմնադրում ու խմբագրում է «Հայաստանի ձայն» շաբաթաթերթը: 1923 - 1928 թթ. նա Ա. Ջամալյանի հետ համախմբագրում է «Դրօշակը»: Ինքը՝ Ս. Վրացյանը այլ թվեր է նշում՝ 1925 - 1933 թթ.[18]:

Բեղուն ու բազմարդյուն է եղել Ս. Վրացյանի լրագրողական գրիչը 1922 -1930 թթ.: Ապրելով Փարիզում նա մասնակցում է 1922 թ. Բոստոնում «Հայրենիք» ամսագրի հիմնադրմանը, այնուհետեւ այդ պարբերականի էջերում լույս են տեսնում Ս. Վրացյանի պատմագիտական հոդվածները[19], որոնք հիմք կազմեցին բացառիկ արժեք ունեցող եւ իր տեսակի մեջ ցարդ միակը հանդիսացող նրա «Հայաստանի Հանրապետութիւնը» աշխատության եւ որի առաջին հրատարակությունը տպագրվել է 1928 թ. Փարիզում:

Ս. Վրացյանի խմբագրական, լրագրողական գործունեության մեջ բացառիկ տեղ է զբաղեցնում «Վէմ» պատմամշակութային երկամսյա հանդեսը:

«Վէմը» տպագրվել է Փարիզում 1933 - 1939 թթ., լույս է տեսել 24 համար՝ Ա-ԻԴ: Հիմնադիր խմբագիր Ս. Վրացյանը պարզում է հրատարաության նպատակը. «Երկու խօսքով մշակոյթ եւ պատմութիւն»: Այնուհետեւ նա գրում է. ,Ժողովուրդները մշակոյթով են ազգ: Առանց զարգացած կենդանի մշակոյթի ազգ չկայ»[20]: Խմբագիրը նույնքան կարեւորություն է տալիս պատմական ճշմարտությանը: «Վէմը» հավատարիմ մնաց իր հռչակած սկզբունքներին: Նա իր էջերը տրամադրում էր իրարամերժ կարծիքներ պարունակող նյութերի:

Հանդեսում հրատարակվող նյութերը դասակարգվել են ըստ թեմաների՝ համապատասխան ենթաբաժիններում, համապատասխան վերնագրերով. «Խմբագրութեան կողմից», «Յօդուածներ», «Հին թուղթեր», «Նոր թուղթեր», «Անցեալք», «Կեանք եւ մշակիւթ», «Գիրք եւ մամուլ», «Գրախօսական», «Հաւելուած»:

«Վէմի» էջերում լույս են տեսել նյութեր, հոդվածներ, հաղորդումներ՝ պատմության, գրականության, հայ եւ օտարազգի գարձիչների, մամուլի, մշակույթի, քաղաքագիտության եւ այլ բնագավառների վերաբերյալ, լուսանկարներ եւ այլն:

Հանդեսի էջերում տպագրվել են Ն. Ադոնցը, Ա. Աբեղյանը, Հ. Քյուրտյանը, բժ. Վ. Թորգոմյանը, Աբր. Գյուլխանդանյանը, Հ. Սիրունին, Ն. Աղբալյանը, եւ այլք: Անշուշտ «Վէմի» էջերում ինքնատիպ նյութերով, հոդվածներով հանդես է եկել Ս. Վրացյանը:

Ս. Վրացյանի հրապարակումների շարքում առանձին հետաքրքրություն ունեն ազգի ապագայի, Հայաստան-Սփյուռք փոխհարաբերության, Սփյուռքի ինքնա-

18 «Սիմոն Վրացեանի ինքնակենսագրութիւնը», «Դրօշակ»,թ.12, էջ 41:

19 «Յուշեր մոտիկ անցյալից», «Հայրենիք», 1923, թթ.1 - 6 շարունակաբար՝ «Էջեր մոտիկ անցեալից», անդ, «Հայերի թիւը եւ վիճակը», «Հայրենիք», 1926, թ. 3, «Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս խորհրդայնացաւ Հայաստանը»,Հ«այրենիք», 1940, թ. 2, 1941, թթ. 3, 4 եւ այլն:

20 «Վէմ», 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 1:

կազմակերպման, ազգային ինքնությունը պահպանելու խնդիրների վերաբերյալ հրապարակումները: ,Մտածումներ ազգային ինքնութեան եւ կազմակերպութեան մասինե հոդվածում[21] Ս. Վրացյանը գտնում է, որ քանի դեռ կա սփյուռք ու հայրենիք, եւ քանի որ քաղաքական հանգամանքների բերումով սփյուռքի ու հայրենիքի կապը փոփոխական է, սփյուռքը պետք է ինքնակազմակերպվի ազգային դեմքը պահպանելու համար: Նա խստագույնս դատապարտում է ազգի բաժանումը արեւելահայերի ու արեւմտահայերի, ինչպես նա դատապարտում էր ամեն պառակտում՝ քաղաքական, կրոնական հողի վրա: Նա առաջարկում է ծրագիր, որ ցարդ չի կորցրել իր հրատապությունը:

1930-ական թթ. Ս. Վրացյանը շարունակում է գործուն լրագրողական աշխատանք կատարել: 1935 թ. ընթացքում «Հայրենիք» ամսագրի էջերում շարունակաբար տպագրվում են նրա խմբագրած ու ծանոթագրած հանդերձ նյութերը՝ «Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան» ընդհանուր խորագրի ներքո: Դրանք գլխավորապես նամակներ են եւ արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն կուսակցության, այլեւ թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի վերաբերյալ: Նամակներն ուղղված են «Դրօշակի» խմբագրությանը, բյուրոյին նաեւ ընկեր-կուսակիցներին, շրջանային ժողովներին, Դաշնակցության՝ տարբեր քաղաքների կազմակերպություններին (կոմիտեներին):

Նամակների մեծ մասը գրված են 1895 թ., հատուկենտ՝ 1893, 1896 թթ. : Հեղինակները կուսակցության անվանի գործիչներ են, որ հետագա տարիներին անվարան ծառայեցին, նաեւ իրենց կյանքի գնով, հայ ժողովրդի ազատագրության գործին. Դժոխք-Հրայր, Թաթուլ, Ա. Վռամյան, Ռոստոմ, Ս. Զավարյան, Հովի. Յուսուֆյան, Քր. Միքայելյան, Արմեն Գարո եւ այլք:

Ս. Վրացյանը շարունակում է լրագրողական գործունեությունը 40-ական թթ. եւս: Կուսակցական եւ այլ թերթերում նա հանդես է գալիս հրապարակախոսական հոդվածներով, եւ նրա հիմնական ելակետը Հայաստանն ու հայ ժողովուրդն են: Այդ տարիներին նրա հեղինակած հոդվածներից առանձնակի ուշադրության է արժանի «Խօսք ընդ ուսուցչի» վերնագրով հոդվածը: Այն ուղղված էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Զ Չորեքչյանին՝ ի պատասխան վերջինիս 1948 թ. Նոր տարվա ուղերձի՝ ուղղված սփյուռքահայությանը: Նոր Նախիջեւանում Ս. Վրացյանը աշակերտել է սարկավագ Գեւորգ Չորեքչյանին: Ժամանակին նամակը հրապարակվեց Սփյուռքի մի շարք թերթերում[22]՝ այնքան մեծ էր նրանում արծածված խնդիրների նշանակությունը: Նույնիսկ այն կարեւորվել է ԽՍՀՄ համապատասխան մարմինների կողմից եւ ռուսերեն թարգմանությունն ուղարկվել է Մոսկվա[23]:

Բեյրութում հաստատված Ս. Վրացյանը թեեւ ծանրաբեռնված էր մանկավարժական, պատմագրական,հուշագրական աշխատանքներով, բայց լրագրողականը մնաց նրա ուշադրության կենտրոնում: 1921-ից հետո պարբերականների թի-

21 «Վէմ», 1933, թ. 3, յունիս-սեպտեմբեր, էջ 1 - 10:
22 Տես «Հայրենիք», 31.11.1948, «Յուսաբեր», 3.12.1948, «Ալիք», 25 - 30.01.1949:
23 Տես ՀԱԱ, ֆ.326, ց.1, գ.222, թթ. 1 - 10:

վը, որոնց նա աշխատակցել է, հասնում է 10-ի: Պատկերացնելու համար, թե ինչ խնդիրներ է նա արծածում, ընտրեցինք Բեյրութում լույս տեսնող «Ազդակը»:

Այս թերթին, որ 1965 թ. Դաշնակցության պաշտոնաթերթը դարձավ, Ս. Վրացյանը թղթակցել է 1961 - 1966 թթ. ընթացքում: Կարելի է խմբավորել նրա հրապարակումներն ըստ թեմայի, եւ կպարզվի, որ նա շարունակում է հավատարիմ մնալ իր դավանանքին՝ մշտապես կարեւորելով Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրին, անցյալին, ներկային առնչվող խնդիրները, հայ-թուրք, հայ-ռուս, հայ-խորհրդային իշխանություններ: Շարունակաբար ներկայացնելով հայդուկների կենսագրությունները, Եղեռնի զոհերին, դրանով հայրենասիրական դաս է տալիս ներկա եւ ապագա սերուդներին: «Ազգը կենսունակ է ոչ միայն ողջերով, այլեւ իր մեռելներով»[24]:

Ուշագրավ, ճշմարտացի գնահատական է տալիս Ս. Վրացյանը Անդրանիկին: Հայտնի է, որ ժողովրդական հերոսը երբեմն արժանացել է աննպաստ գնահատականների: «Եթե ժողովրդական կամ ազգային հերոս բառը որոշ իմաստ ունի, Անդրանիկը եղավ բառիս ամենալայն մտքով ազգային հերոս, որի ճակատը դափնե պսակով զարդարեցին «Հայոց կուսանք» եւ հայ աշուղների փառքը երգեր ձոնեցին նրան»[25]:

Ս. Վրացյանը յուրահատուկ մեկնաբանություն է տալիս ահաբեկչությանը ընդհանրապես եւ հայկականին մասնավորապես: Մերժելով ահաբեկչությունն իբրեւ քաղաքական պայքարի միջոց, նա գրում է. «Բայց պատմության ընթացքում եղել է անհրաժեշտություն, հզոր զենք՝ սանձահարելու համար չարագործներին եւ բարձրացնելու բռնության ճիրաններում գալարվող, հուսահատ բազմությունների բարոյական կորովը[26]:

«Ազդակում» լույս տեսած՝ Ս. Վրացյանի հրապարակումների շարքում հատուկ նշելի են Արամ Խաչատրյանի Բեյրութում կայացած 1961 թ. մայիսի 12 - 14 համերգներին նվիրված նյութերը. հեղինակը կրկին ու կրկին շեշտում է մշակույթի դերը ժողովուրդների, ազգերի կյանքում: Այդ օրերին կողք կողքի էին միասնական, համերաշխ ամեն դասակարգի հայեր, անհետացած էր ամեն բաժանում[27]:

Բազմաբնույթ են Ս. Վրացյանի «Ազդակի» էջերում լույս տեսած նյութերը, նույնպես եւ «Վէմի» եւ մի շարք այլ պարբերականներում հրատարակածները: Համոզված ենք, որ նրա խմբագրական-լրագրողական գործունեությունն արժանի է հանգամանալից հետազոտության եւ գնահատության:

24 «Ազդակ», 1966, ապրիլի 23, թ. 42:
25 «Ազդակ», 1964, յունիսի 29, թ. 97:
26 «Ազդակ», 1964, ապրիլի 16, թ. 36:
27 Տես «Ազդակ», 1961, յունիսի 1, թ. 73: